

Բրիտանական գրականություն, Արձակ, Պատմվածք, Ղետեկտիվ  
Թարգմանիչ՝ Հովհաննես Ղուկասյան

## Արթուր Քոնան Դոյլ

### Մագարինիի քարը

Դոկտոր Ուոտսոնի համար հաճելի էր կրկին լինել Բեյքր-սթրիթի երկրորդ հարկի թափթփված սենյակում՝ այնքան հիանալի արկածների այդ սկզբնակետում: Նա նայեց պատերին փակցված աղյուսակներին և սխեմաներին, ծծմբաթթվով այրված քիմիկատների դարակին, սենյակի անկյունում՝ պատին հենված պատյանով ջութակին, ածխի դույլին, ուր մի ժամանակ ծխախոտ ու ծխամորձեր էին դրված և, վերջապես, նրա հայացքը կանգ առավ պատանի, բայց շատ բանիմաց և հնարամիտ սպասավորի՝ Բիլիի ժպտացող ջահել դեմքին, որին կարծես հաջողվել էր անցնել հռչակավոր խուզարկուի առեղծվածային կերպարը պարուրող օտարացման և միայնության անդունդի կամրջի վրայով:

— Այստեղ ամեն ինչ առաջվա նման է: Դուք էլ չեք փոխվել: Հուսով եմ, նույնը կարելի է և նրա մասին ասել:

Բիլին փոքր-ինչ անհանգիստ նայեց ննջարանի փակ դռանը:

— Նա, կարծես, քնած է, — ասաց նա:

Ամառային խաղաղ եղանակ էր, և դեռ երեկոյան ժամը յոթն էր, սակայն Բիլիի ենթադրությունը չգարմացրեց դոկտոր Ուոտսոնին: Նա վաղուց վարժվել էր իր հին ընկերոջ արտասովոր ապրելակերպին:

— Եթե չեմ սխալվում, դա նշանակում է, որ նրան գործ է հանձնարարված, այնպես չէ՞:

— Միանգամայն ճիշտ է, սրբ: Նա այժմ ամբողջովին այդ գործով է կլանված: Ես նույնիսկ վախենում եմ նրա առողջության համար: Նա օրեցօր գունատվում է, նիհարում և ոչինչ չի ուտում: Միսիս Հադսոնը հարցրել է նրան. «Դուք ե՞րբ բարեհաճելու ճաշել, միստր Հոլմս»: Իսկ նա պատասխանել է. «Վաղը չէ մյուս օրը, ժամը յոթն անց կեսին»: Չէ որ դուք գիտեք, թե նա ինչ վիճակում է լինում, երբ տարվում է գործով:

— Այո, Բիլի, գիտեմ:

— Նա հետամտում է ինչ-որ մեկին: Երեկ նա աշխատանք փնտրող բանվորի շորերով դուրս եկավ, այսօր պառավ կնոջ զգեստներ էր հագել: Եվ այնքան նման էր, որ բնավ չճանաչեցի, իսկ ես, թվում է, արդեն պետք է իմանայի նրա հնարքները:

Քննադատելով Բիլին ցույց տվեց բազմոցին հենած անասելի քրքրված հովանոցը:

— Սա պառավ կնոջ հանդերձանքի բաղկացուցիչ տարրերից է:

— Այս անգամ ինչ գործ է, Բիլի:

Բիլին ցածրացրեց ձայնը, կարծես խոսքը պետական մեծ գաղտնիքի մասին էր:

— Չեզ, իհարկե, կասեմ, սրբ: Բայց ձեզնից բացի ոչ մեկը չպետք է իմանա: Սա թագի ադամանդի հենց այն գործն է:

— Դուք հարյուր հազար ֆունտ արժողությամբ քարի հափշտակության մասի՞ն եք ասում:

— Այո, սրբ: Ինչ գնով էլ լինի, նրանք պետք է գտնեն այն: Ե՛վ պրեմիեր մինիստրը, և՛ ներքին գործոց մինիստրը եկան մեզ մոտ ու նստած էին հենց այս բազմոցին: Միստր Հոլմսը շատ սիրալիր էր նրանց հետ: Նա իրեն շատ բնական էր պահում և խոստացավ անել հնարավոր ամեն բան: Եվ հետո լորդ Քանթլմիրն էլ...

— Ահա՛ թե ինչ...

— Այո, սրբ, հասկանում եք, թե դա ինչ է նշանակում: Նա, եթե կարելի է այսպես ասել, սոսկալի մեծամիտ է: Ես կարող եմ գործ ունենալ պրեմիեր մինիստրի հետ և ոչ մի առարկություն չունենմ ներքին գործոց մինիստրի դեմ՝ նա դաստիարակված և բարեհամբույր մարդու տպավորություն է թողնում, իսկ այդ լորդին ես ամենևին տանել չեմ կարող: Միստր Հոլմսը նույնպես: Բանն այն է, որ լորդը չի հավատում միստր Հոլմսին և առարկում էր, որ գործը նրան հանձնեն: Ինձ թվում է, նա նույնիսկ ուրախ կլինի, եթե միստր Հոլմսը գլուխ չհանի գործից:

— Իսկ միստր Հոլմսը դա գիտե՞:

— Դեռ այնպիսի դեպք չի եղել, որ միստր Հոլմսը ինչ-որ բան չիմանա:

— Դե, ես հույս ունեմ, որ նա գլուխ կհանի, և լորդ Քանթլմիրը կխայտառակվի: Լսեք, Բիլի, ինչի՞ համար է պատուհանի այդ վարագույրը:

— Միստր Հոլմսը երեք օր առաջ է կախել: Այնտեղ մենք հետաքրքիր մի բան ունենք... Բիլին մոտեցավ ու ետ քաշեց սենյակը պատուհանի խորշից բաժանող վարագույրը:

Դուկտոր Ուոտսոնը զարմանքից ակամա գոռաց. դիմացը, խոր բազկաթռռի մեջ, նստած էր իր ընկերոջ ճիշտ նմանակը. թե՛ խալաթը, թե՛ մնացած ամեն ինչը նույնն էր, ինչ-որ Հոլմսինը, երեք քառորդով դեպի պատուհանը թեքված դեմքը թեթևակի խոնարհված էր ասես աներևույթ գրքի վրա: Բիլին գլուխն անջատեց մարմնից և պահեց ձեռքին:

— Մենք դրան տարբեր դիրքեր ենք տալիս, որպեսզի ավելի նման լինի կենդանի մարդու: Եթե պատուհանի վարագույրները իջեցրած չլինեին, ես, իհարկե, չէի համարձակվի ձեռք տալ:

— Մի անգամ մեզ մոտ դրա նման մի բան արդեն եղել է:

— Ես այն ժամանակ այստեղ չէի, — ասաց Բիլին: Նա մի կողմ քաշեց վարագույրը և նայեց փողոց: — Մեզ հետևում են, ա՛յ, այն տնից: Ահա, պատուհանի մոտ մարդ կա, ուզո՞ւմ եք նայել:

Ուոտսոնը մի քայլ առաջ արեց, բայց այդ ժամանակ ննջարանի դուռը բացվեց, և այնտեղից հայտնվեց Հոլմսի նիհար, երկար կերպարանքը. դեմքը սմբած էր և գունատ, բայց ինքն առույգ էր ինչպես միշտ: Մի ուսույունով նա հայտնվեց պատուհանի մոտ:

— Բավական է, Բիլի, — ասաց նա, — դուք վտանգում եք ձեր կյանքը, իսկ հատկապես հիմա դուք ինձ շատ եք պետք: Ուրախ եմ ձեզ տեսնել ձեր հին բնակարանում, Ուոտսոն: Դուք հայտնվեցիք կրիտիկական պահին:

— Ես դա զգում եմ:

— Կարող եք գնալ, Բիլի: Չգիտեմ, ինչպես վարվել այս տղայի հետ: Որքանով իրավունք ունեմ նրան վտանգի ենթարկել:

— Ի՞նչ վտանգի, Հոլմս:

— Հանկարծակի մահվան վտանգի: Չեմ զարմանա, եթե այսօր երեկոյան ինչ-որ բան կատարվի:

— Բայց հատկապես ի՞նչ:

— Օրինակ՝ ինձ սպանեն:

— Չի կարող պատահել, Հոլմս, դուք կատակում եք:

— Հումորից զուրկ լինելով հանդերձ, ես կարող էի ավելի լավ կատակ մտածել: Բայց առայժմ կարող ենք բավականություն ստանալ կյանքից, ճի՞շտ է: Ոգելից խմիչքները ձեզ հակացուցված չե՞ն: Սիֆոնը և սիգարները նախկին տեղում են: Հուսով եմ, դուք դեռ չեք արհամարհում իմ խեղձ ծխամորձն ու ծխախոտը: Այս օրերին դրանք պետք է փոխարինեն իմ սննդին:

— Բայց դուք ինչու՞ եք հրաժարվում կերակուրից:

— Որովհետև սովը սրում է մտավոր կարողությունները: Իմ թանկագին Ուոտսոն, դուք, որպես բժիշկ, պետք է համաձայնեք, որ մարսողության ընթացքում ուղեղը կորցնում է ճիշտ այնքան արյուն, որքան պահանջում է ստամոքսի աշխատանքը: Ես այժմ ամբողջովին ուղեղ եմ: Մնացածը հավելված է, ոչ ավելին: Այդ պատճառով ես նախ և առաջ պետք է հաշվի նստեմ ուղեղիս հետ:

— Հոլմս, բայց դուք խոսում էիք ինչ-որ վտանգի մասին:

— Ախ հա, համենայն դեպս, չէր խանգարի ձեր հիշողությունը ծանրաբեռնել մարդասպանի անունով և հասցեով: Դուք կարող եք այդ տեղեկությունները Սկոտլանդ-Յարդ հանձնել անձնվեր միստր Հոլմսի հրաժեշտի ողջույնի տեսքով: Նրա անունը Սիլվիուս է, կոմս Նեգրետո Սիլվիուս: Գրեք. Մուրսայդ-Գարդենս, 136, Նորդ-Վեստ: Գրեցի՞ք:

Ուոտսոնի ազնիվ դեմքը ջղաձգվեց: Նա շատ լավ գիտեր, որ Հոլմսը երբեք կանգ չի առնի ոչ մի վտանգի առաջ և ավելի շատ հակված էր թերագնահատելու այն, քան գերագնահատելու: Ուոտսոնը սովոր չէր անտեղի ժամանակ վատնելու և վճռականորեն ոտքի ելավ:

— Ձեր տրամադրության տակ եմ Հոլմս, այս օրերին ես լրիվ ազատ եմ:

— Բարոյականության առումով դուք բոլորովին դեպի լավը չեք փոխվել, Ուոտսոն: Ձեր հին արատներին ավելացել է ևս մեկը՝ դուք սկսել եք ստել: Ձեր ողջ տեսքն ասում է, որ դուք աշխատանքով ծանրաբեռնված բժիշկ եք՝ շրջապատված հիվանդներով:

— Նրանց մեջ ոչ մի լուրջ հիվանդ չկա: Բայց մի՞թե չեք կարող ձերբակալել այդ մարդուն:

— Իհարկե կարող եմ, Ուոտսոն, դրա համար էլ նա այդպես անհանգստանում է:

— Դե, ուրեմն, էլ ի՞նչ կա:

— Բանն այն է, որ ես չգիտեմ, թե որտեղ է ադամանդը:

— Ախ հա, Բիլին պատմեց . թագի ադամանդը:

— Ճիշտ այդպես, Մազարինիի դեղին մեծ քարը: Ես ցանց գցեցի, և ձուկը մեջն ընկավ: Բայց դեռ չեմ ստացել քարը: Ինձ ինչ օգուտ կողոպտիչներին հավաքելուց: Իհարկե, աշխարհն ավելի լավ կդառնա, եթե նրանց բոլորին բանտ նստեցնենք: Բայց ես ուրիշ նպատակ ունեմ . ինձ քարն է պետք:

— Ուրեմն, կոմս Սիլվիուսը ցանցն ընկած ձկների՞ց է:

— Այո, ընդ որում՝ շնածուկ, որը կծում է: Մյուսը՝ Սեն Մերթոնը, բնցքամարտիկ է: Սենը վատ տղա չէ, բայց կոմսը նրան օգտագործում է իր նպատակների համար: Սենը շնածուկ չէ, այլ ընդամենը մեծազուլիս խարակածուկ: Բայց, միևնույն է, նա ևս թպրտում է իմ ցանցում:

— Իսկ որտե՞ղ է այդ կոմս Սիլվիուսը:

— Ես այսօր ամբողջ առավոտն անց եմ կացրել նրա քթի տակ: Չէ որ դուք ինձ տեսել եք պառավ կնոջ դերում: Բայց այս անգամվա նման հաջող երբեք չի ստացվել: Կոմսը նույնիսկ բարձրացրեց իմ հովանոցը «Թույլ տվեք, տիկին» խոսքերով, չէ որ նա կիսով չափ իտալացի է, և իբրև իսկական հարավցի, կարողանում է լինել չափազանց սիրալիկ, եթե միայն լավ տրամադրության մեջ է, բայց եթե տրամադրություն չունի՝ իսկական սատանա է: Ինչպես տեսնում եք, Ուոտսոն, կյանքում հետաքրքիր բաներ են պատահում:

— Բայց դա կարող էր ողբերգությամբ ավարտվել:

— Չեմ վիճում: Ես նրա ետևից գնացի մինչև Մայնորիս փողոցը, ծեր Շտրաուբենգեի արհեստանոցը: Այնտեղ նրա համար անաղմուկ գենք պատրաստեցին, հիանալի բան է, և եթե չեմ սխալվում, հիմա գտնվում է դիմացի պատուհանի մոտ: Դուք տեսա՞ք մանեկենը: Ախ հա, Բիլին ձեզ ցույց տվեց: Ցանկացած թոպեին գնդակը կարող է մխրձվել այդ գեղեցիկ գլխի մեջ: Ի՞նչ կա, Բիլի:

Բիլին ներս մտավ մատուցարանին դրված այցեքարտով: Հոլմսը նայեց այցեքարտին, նրա հոնքերը ձգվեցին և շրթունքներին քմծիծաղ հայտնվեց:

— Նա որոշել է անձամբ գալ այստեղ: Դրան չէի սպասում:

Պետք է ցույին եղջույրներից բռնել, Ուոտսոն: Այս մարդը ընդունակ է ամեն ինչի: Դուք, հավանաբար, լսել եք, որ կոմսը խոշոր կենդանիների հիանալի որսորդ է: Եթե նրան հաջողվի իր որսապարկը գցել նաև ինձ, դա կլինի իր մարզական կարիերային արժանի փայլուն ավարտ: Նա, իհարկե, զգում է, որ ես ուր որ է կհասնեմ իրեն:

— Ոստիկանություն կանչեք:

— Հավանաբար, այդպես էլ կանեմ, բայց ոչ հիմա: Լավ նայեք, Ուոտսոն, փողոցում մարդ չկա՞:

Ուոտսոնը զգուշորեն նայեց վարագույրի ետևից:

— Ինչ-որ լողլող է կանգնած դռան մոտ:

— Դե, դա Սեն Մերթոնն է, հավատարիմ, բայց ոչ այնքան խելոք Սենը: Որտեղ է այդ ջենտլմենը, Բիլի:

— Ընդունարանում, սրբ:

— Երբ զանգը տամ, ներս թողեք նրան:

— Լսում եմ, սրբ:

— Եթե ես սենյակում էլ չլինեմ, միևնույն է, ներս թողեք նրան:

— Լսում եմ, սրբ:

- Ուոտսոնը սպասեց, մինչև դուռը փակվի, հետո գրգռված դիմեց իր գրուցակցին:
- Լսեք, Հոլմս, սա պարզապես անթույլատրելի է: Չէ որ նա հուսահատության հասած մարդ է և ոչ մի բանի առաջ կանգ չի առնի: Հնարավոր է, եկել է, որպեսզի ձեզ սպանի:
- Դե ինչ, ես բնավ չեմ զարմանա:
- Այդ դեպքում, ես կմնամ ձեզ հետ:
- Ձեր ներկայությունը կարող է շատ խանգարել:
- Նրա՞ն:
- Ոչ թանկագինս, ինձ:
- Այնուամենայնիվ, չեմ կարող ձեզ մենակ թողնել:

— Ոչ, Ուոտսոն, դուք կարող եք և պետք է այդ անեք, դուք դեռ երբեք խաղից դուրս չեք եկել: Ես հավատացած եմ, որ այս անգամ ևս այն կհասցնեք մինչև վերջ: Այդ մարդը այստեղ է հայտնվել հանուն իր նպատակների, բայց հնարավոր է, որ այստեղ մնա հանուն իմ նպատակների: — Հոլմսը հանեց ծոցատետրը և մի քանի տող գրեց: — Մեկնեք Սկոտլանդ-Յարդ և այս գրությունը հանձնեք քրեական հետախուզության բաժնի աշխատակից Յուզեյին: Ետ վերադարձեք ոստիկանության հետ և այն ժամանակ հնարավոր կլինի ձերբակալել կոմսին:

- Ես հաճույքով կօգնեմ ձեզ այս գործում:
  - Հուսով եմ, մինչև ձեր վերադառնալը ես ժամանակ կունենամ պարզելու, թե որտեղ է քարը:
- Հոլմսը զանգահարեց:

— Հավանաբար, ավելի լավ կլինի, որ դուրս գանք ննջարանի միջով: Չափազանց հարմար է երկրորդ ելք ունենալը: Ես գերադասում եմ, իմ շնածկանը նայել այնպես, որ նա ինձ չտեսնի և, չէ որ դուք գիտեք, այսպիսի դեպքերի համար ես ինչ-որ բան մտածել եմ:

Այսպիսով, երբ մի քանի րոպե անց Բիլին ներս թողեց Սիլվիուսին, սենյակում ոչ ոք չկար: Հռչակավոր հրածիգը, մարզիկը, պճնամուրը հաղթանդամ, թուխ տղամարդ էր, նրա մեծ, սև բեղերը ծածկում էր բարակ, դաժան բերանը, որի վրա կախվել էր արծվի կտուց հիշեցնող երկար, կեռ քիթը: Լավ էր հագնված, բայց վառ փողկապը, փայլուն քորոցը և շողացող մատանին բավականին ցայտուն կերպով էին աչքի զարնում: Երբ դուռը ետևից փակվեց, նա կատաղի և միաժամանակ վախով շուրջը նայեց, ասես ամեն քայլափոխի ծուղակի սպասելով: Հանկարծ կտրուկ ցնցվեց՝ պատուհանի մոտ նկատելով բազկաթոռին նստած խուզարկուի հակված գլուխն ու խալաթի օձիքը: Սկզբում նրա դեմքը կատարյալ զարմանք արտահայտեց: Հետո մարդասպանի սև աչքերը ուրախ փայլեցին: Նա մի անգամ ևս զննեց շուրջը՝ համոզվելու համար, որ իրեն ոչ ոք չի տեսնում, և հետո, բարձրացնելով ծանր ձեռնափայտը, թաթերի վրա գաղտագողի մոտեցավ լուռ կերպարանքին: Նա արդեն կծկվել էր, որպեսզի վերջին թռիչքը գործի և հարվածի, երբ հանկարծ ննջարանի բացվող դռնից նրան կանգնեցրեց Հոլմսի հանգիստ և ծաղրական ձայնը:

— Տեսեք, չջարդեք նրան, կոմս:

Մարդասպանը ետ ընկրկեց, նրա ծամածռված դեմքը զարմանք արտահայտեց: Նա նորից բարձրացրեց իջեցրած ձեռնափայտը, կարծես ցանկանալով իր կատաղությունը պատկերից բնագրին փոխանցել, բայց Հոլմսի մոխրագույն աչքերի կարծր հայացքի և քնծիծաղի մեջ մի ինչ-որ բան կար, որը նրան ստիպեց նորից իջեցնել ձեռքը:

— Հիանալի առարկա է: Ֆրանսիացի վարպետ Տավերնիեի գործն է: Նա նույնպիսի հմտությամբ է մոմե մարմիններ պատրաստում, ինչպես ձեր բարեկամ Շտրաուբենզեն՝ անաղմուկ հրացան:

— Անաղմուկ հրացան՞: Չեմ հասկանում, սըր, դուք ինչ եք ցանկանում դրանով ասել:

— Սեղանին դրեք ձեր զլխարկն ու ձեռնափայտը: Այ, այդպես, շնորհակալ եմ: Եվ, նստեք, խնդրեմ: Գուցե, միանգամից հանեք և ձեր ատրճանա՞կը: Ի միջի այլոց, եթե դուք գերադասում եք նստել նրա վրա, ես չեմ առարկում: Դուք ճիշտ ժամանակին եք եկել, ինձ անհրաժեշտ է խոսել ձեզ հետ:

Կոմսը սպառնագին խոժոռեց թավ հոնքերը:

— Ես էլ էի ցանկանում ձեզ երկու խոսք ասել, Հոլմս: Այդ պատճառով էլ եկա: Չեմ ժխտի, ես հենց նոր ցանկանում էի փշրել ձեր գլուխը:

Հոլմսը նստեց սեղանի ծայրին:

— Ես այդպես էլ հասկացա, որ ձեր խելքին նման բան փչեց: Բայց ես ինչու՞ եմ ձեր կողմից այդպիսի ուշադրության արժանացել:

— Որովհետև, դուք ձեզ բավական շատ բան եք թույլ տալիս, դա սկսում է նյարդերիս վրա ազդել: Որովհետև, դուք ձեր մանկլավիկներին ուղարկում եք ինձ հետևելու:

— Ես ոչ ոքի չեմ ուղարկել, ազնիվ խոսք:

— Հիմարություններ դուրս մի տվեք: Ես տեսա, որ ինձ հետևում են: Բայց մենք դեռ կտեսնենք, ով՞ ում, Հոլմս:

— Անշուշտ, դա մանրուք է, կոմս Սիլվիուս, բայց ձեզ կխնդրեի ինձ դիմելիս պահպանել քաղաքավարության կանոնները: Դուք հասկանում եք, որ իմ գործունեության օրից հարկ կլինե՞ր դու-ով դիմել հանցագործների կեսին և համաձայնե՞ք, որ ես չեմ կարող ոչ մեկին բացառություն անել, որպեսզի գայթակղության մեջ չզգես ոչ մեկին:

— Բարի, թող լինի միստր Հոլմս:

— Հիանալի է: Այնուամենայնիվ, հավատացնում եմ ձեզ, դուք սխալվում եք, պնդելով, իբր ես օգտվում եմ գործակալներից:

Կոմս Սիլվիուսը արհամարհանքով քնծիծաղեց:

— Մի կարծեք, թե ձեզնից հիմար եմ և ոչինչ չեմ նկատում: Երեկ դա ինչ-որ մարզիկ էր: Այսօր՝ պառավ կին: Նրանք ոչ մի բան չեն տեսադաշտից դուրս չթողեցին:

— Դուք ինձ շողոքորթում եք, սըր: Ծերուկ բարոն Դաուսոնը կախվելուց մի օր առաջ ասաց, որ թատրոնը ի դեմս ինձ կորցրել է այնքան, որքան շահել է արդարադատությունը: Իսկ այսօր դուք գովաբանում եք ինձ իմ փոքրիկ մարմնավորումների համար:

— Ուրեմն այդ... Ուրեմն այդ դո՞ւք էիք:

Հոլմսը թոթվեց ուսերը:

Այնտեղ անկյունում դրված է այն հովանոցը, որը դուք, դեռ ոչինչ չկասկածելով, այնպես քաղաքավարի հանձնեցիք ինձ:

— Եթե ես իմանայի, դուք երբեք չէիք...

— Ես երբեք չէի տեսնի այս համեստ բնակարանը: Ա՞յդ էիք ցանկանում ասել: Ես դա լավ հասկացա: Բոլորիս հատուկ են վրիպումները, որոնց համար հետո զղջում ենք: Բայց, համենայն դեպս, դուք ինձ չճանաչեցիք, և ահա ես նստած եմ ձեր դիմաց:

Կոմսի խոժոռված հոնքերը, որոնց տակից սպառնալից փայլում էին աչքերը, ավելի խիստ ձգվեցին:

— Դե ինչ, ավելի վատ: Ուրեմն, դրանք ձեր գործակալները չէին, այլ դուք եք խեղկատակություն անում և քթներդ խոթում ձեզ չվերաբերվող գործի մեջ: Ինքներդ եք խոստովանում, որ հետևել եք ինձ: Ինչու՞:

— Բավական է, կոմս, չէ՞ որ դուք էլ ինչ-որ ժամանակ Ալժիրում առյուծներ եք որսացել:

— Իսկ ի՞նչ կա որ:

— Թույլ տվեք հարցնել՝ ինչու՞:

— Ինչու՞: Հանուն սպորտի, հանուն ուժեղ զգայության, հանուն համարձակության:

— Եվ, բացի այդ, ցանկանում էիք երկիրը մաքրել գիշատիչներից՞:

— Միանգամայն ճիշտ է:

— Այժմ ձեզ հասկանալի՞ է իմ նպատակը:

Կոմսը վեր թռավ, և նրա ձեռքը ինքնաբերաբար ձգվեց դեպի ետևի գրպանը:

— Նստեք, նստեք, կոմս: Բացի այդ, ես ունեմ մեկ այլ՝ ավելի կոնկրետ նպատակ: Ինձ հարկավոր է դեղին ադամանդը:

Կոմս Սիլվիուսը չարախնդալով դարձյալ ընկավ աթոռին:

— Ահա՛ թե ինչ, — ասաց նա:

— Դուք հիանալի գիտեք, որ հանուն դրա եմ հետևել ձեզ և դուք միայն դրա համար եք այսօր այստեղ հայտնվել, որպեսզի պարզեք, թե շա՞տ բան է արդյոք ինձ հայտնի և որքանո՞վ է անհրաժեշտ ինձ վերացնել: Կարող եք հավատալ, որ ձեր տեսակետից դա միանգամայն անհրաժեշտ է, քանի որ ես ամեն ինչ գիտեմ, բացառությամբ մի փաստից, բայց ես մտադիր եմ այդ մասին ձեզնից իմանալ:

— Մի՞թե: Հետաքրքիր է, դա ինչ փաստ է, որ դուք չգիտեք:

— Որտե՞ղ է այժմ գտնվում ադամանդը:

Կոմսը խորամանկորեն նայեց իր գրուցակցին:

— Եվ միայն դա՞: Բայց, գրողը տանի, ինչպե՞ս կարող եմ դա ասել:

— Կարող եք, և դուք դա կասեք:

— Կարժո՞ւմ եք:

— Կոմս Սիլվիուս, ձեզ չի հաջողվի ինձ վախեցնել:

Սիլվիուսի վրա հառված Հոլմսի աչքերը նեղացան և սպառնազին փայլեցին պողպատյա սայրերի պես:

— Ես տեսնում եմ ձեր ողջ էությունը, կարծես ապակուց լինեք:

— Այդ դեպքում, դուք տեսնում եք, որտեղ է ադամանդը:

Հոլմսը ուրախ ծափ տվեց և հետո արտահայտիչ ձևով բարձրացրեց մատը:

— Եվ այսպես, դուք գիտեք, որտեղ է այն, ինքներդ խոստովանեցիք:

— Ես ոչինչ չեմ խոստովանել:

— Լսեք, կոմս, եթե դուք խոհեմ լինեք, մենք կարող ենք գործարք կնքել, հակառակ դեպքում դա ձեզ վրա էժան չի նստի:

Կոմս Սիլվիուսը հայացքը սևեռեց առաստաղին:

— Ով ում է վախեցնում՝ դո՞ւք ինձ, թե՞ ես ձեզ:

Հոլմսը մտածկոտ նայեց նրան, ինչպես գրոսմայստեր, որը պատրաստվում էր վճռական քայլ կատարել: Հետո նա քաշեց գրասեղանի դարակը և այնտեղից հանեց հաստ նոթատետրը:

— Գիտե՞ք ինչ կա իմ այս նոթատետրում:

— Գաղափար չունեմ, սրբ:

— Դուք:

— Ե՞ս:

— Այո, սրբ, դուք ամբողջությամբ այստեղ եք՝ ձեր նողկալի և հանցագործ կյանքի ամեն մի քայլով:

— Գնացեք գրողի ծոցը, Հոլմս, — վեր թռավ կոմսը, փախցնելով աչքերը: — Ինձ համբերությունից մի հանեք:

— Այստեղ ամեն ինչ գրի է առնված, կոմս: Ամենը, ինչ վերաբերում է Բլիմերի ողջ կալվածքը ձեզ թողած պառավ միսիս Հարոլդի սպանությանը, որի փողերն այնպես արագ տանուլ տվեցիք:

— Դա ինչ բարբաջանք է:

— Եվ միս Մինի Ուորենդերի ողջ պատմությունը:

— Վերջացրեք: Դուք դրանից ոչ մի բան չեք քամի:

— Եվ ուրիշ շատ բաներ, կոմս: Կողոպուտ ձեպընթացում՝ 1892 թ. փետրվարի 12-ին, Ռիվիերայի ճանապարհին: Եվ Լիոնի բանկի չեկի կեղծումը հենց նույն տարում:

— Դուք այդտեղ արդեն սխալվում եք:

— Ուրեմն, ես չեմ սխալվել մնացած բաներում: Լսեք, կոմս, դուք չէ որ թուղթ խաղում եք: Ինչ իմաստ ունի խաղը շարունակել, եթե գիտեք, որ ձեր հակառակորդի ձեռքին են բոլոր հաղթաթղթերը:

— Ի՞նչ կապ ունի այս ամբողջ շատախոսությունը թանկարժեք քարի հետ:

— Համբերություն, կոմս: Չափավորեք ձեր հետաքրքրասիրությունը: Այս բոլոր հանցանշանները ձեր դեմ են: Բայց, միաժամանակ, նաև անվիճելի հանցանշաններ ունեն ադամանդի գործով ձեր և ձեր թիկնապահի դեմ:

— Ի՞նչ հանցանշաններ:

— Նախ, այն կառապանի ցուցմունքը, որի հետ գնացել եք Ուայթհոլ, և հետո՝ այն կառապանի, որը ձեզ հետ է բերել: Երկրորդ ցուցափեղկի մոտ ձեզ տեսած բարապանի ցուցմունքը: Եվ, վերջապես, ես ունեմ Այկի Սանդերսի ցուցմունքը, որը հրաժարվել է կտրել ձեր քարը: Այկին մատնել է ձեզ, այնպես որ, խաղը տանուլ է տրված:

Կոմսի ճակատի երակները ցցվեցին: Աշխատելով խեղդել հուզմունքը, նա ջղածգորեն սեղմեց մազոտ, թուխ ձեռքերը: Փորձեց խոսել, բայց լեզուն չէր ենթարկվում իրեն:

— Ահա իմ խաղաթղթերը: Ես դրանք բացեցի ձեր առջև: Բայց մի խաղաթուղթ պակասում է: Պակասում է միայն ադամանդի թագավորը: Ես չգիտեմ, որտեղ է քարը:

— Եվ երբեք չեք իմանա:

— Դուք այդպե՞ս եք կարծում: Խելամիտ եղեք, կոմս: Ծանր ու թեթև արեք բոլոր հանգամանքները: Ձեզ քսան տարի կնստեցնեն: Այնպես, ինչպես և Սեմ Մերթոնին: Քարից ձեզ ի՞նչ օգուտ: Ոչ մի: Բայց եթե այն վերադարձնեք, ես խոստանում եմ, որ գործը դատի չի հասնի: Ոչ դուք, ոչ Սեմը մեզ հարկավոր չեք: Մեզ միայն քարն է պետք: Տվեք այն, և եթե դուք ձեզ լավ պահեք, ես երաշխավորում եմ ձեր ազատությունը: Բայց եթե դուք նորից բռնվեք, դա ձեր վերջը կլինի: Սակայն այժմ ինձ հանձնարարված է քարը ձեռք գցել և ոչ թե ձեզ:

— Իսկ եթե ես չհամաձայնեմ:

— Դե ինչ, այդ դեպքում ստիպված կլինեմ ձեզ տանել և ոչ թե քարը:

Հոլմսը զանգը տվեց, և ներս մտավ Բիլին:

— Կոմս, կարծում եմ, վատ չէր լինի այս խորհրդակցությանը հրավիրել և ձեր բարեկամ Սեմին: Այսպես թե այնպես, նա ևս շահագրգռված կողմ է: Բիլի, փողոցում, մուտքի մոտ, դուք կտեսնեք անձոռնի, հսկա մի ջենտլմենի: Խնդրեք նրան այստեղ գա:

— Իսկ եթե նա հրաժարվի՞, սըր:

— Ոչ մի բռնություն, Բիլի: Նրա հետ կոպիտ մի վարվեք: Եթե դուք ասեք, որ իրեն կանչում է կոմս Սիլվիուսը, նա անպայման կգա:

— Ի՞նչ եք պատրաստվում անել, — հարցրեց կոմսը, հենց որ Բիլին դուրս եկավ:

— Ես հենց նոր ընկերոջս՝ Ուոտսոնին ասացի, որ մի շնածուկ և մի խարակածուկ են իմ ցանցը ընկել: Հիմա ես ձգում եմ ցանցը, և երկու ձկներն էլ ջրի երես են դուրս գալիս:

Կոմսը վեր ելավ աթոռից՝ ձեռքը մեջքին: Հոլմսը ձեռքը մտցրեց խալաթի գրպանը:

— Ձեզ վիճակված չէ անկողնում մեռնել, Հոլմս:

— Այո, ես արդեն մեկ անգամ չէ, որ մտածել եմ այդ մասին: Բայց մի՞թե դա այդքան կարևոր է: Ըստ երևույթին, կոմս, դուք ևս մահը կընդունեք ոչ հորիզոնական, այլ ուղղահայաց դիրքով: Սակայն այս բոլոր մռայլ տեսությունները միայն տրամադրություն են փչացնում: Ավելի լավ չէ՞ր լինի անհոգ վայելեհինք այս օրը:

Հանցագործ աշխարհի արքայի մուգ թշնամական աչքերն անսպասելիորեն բռնկվեցին, ինչպես իսկական գիշատիչի աչքեր: Հոլմսը ողջ էությանը լարված էր և պատրաստ ցանկացած պահին հարվածը ետ մղելու. թվում էր, թե նա դրանից ավելի բարձրահասակ էր դարձել:

— Չարժե ատրճանակը շոշափել, բարեկամս, — հանգիստ ասաց նա: — Դուք շատ լավ գիտեք, որ չեք համարձակվի գործի դնել դա, եթե նույնիսկ ես ձեզ ժամանակ տամ դուրս քաշելու այն: Դրանով գլուխդ փորձանքից չես ազատի: Դրանք այնքան աղմուկ են բարձրացնում, կոմս: Ավելի լավ է օգտվեք անաղմուկ հրացանից: Իսկ ես կարծես լսում եմ ձեր արժանի ընկերակցի թեթև քայլքը: Բարի օր, միստր Մերթոն: Ձանձրալի է փողոցում սպասելը, չէ՞:

Բացառիկ բռնցքամարտիկ, հաստամարմին մի երիտասարդ, հիմար, համառ և անտաշ դեմքով, անշնորհք կանգ առավ դռների մեջ՝ շփոթված նայելով շուրջը: Հոլմսի սիրալիք տոնը շփոթեցրեց նրան, և, չնայած Սեմը աղոտ կերպով այդ տոնի մեջ թշնամություն զգաց, այնուամենայնիվ, չգիտեր, թե իրեն ինչպես պահի: Նա շրջվեց իր ավելի խորաթափանց ընկերոջ կողմը:

— Ի՞նչ է այստեղ կատարվում, կոմս: Ի՞նչ է նրան հարկավոր: Ի՞նչ է եղել: — Նրա ծայնը խուլ ու խռպոտ հնչեց:

Կոմսը վեր քաշեց ուսերը: Նրա փոխարեն Սեմին պատասխանեց Հոլմսը:

— Եթե կարճ ասենք, միստր Մերթոն, ձեր գործը տանուլ է տրված:

Բռնցքամարտիկը շարունակեց դիմել իր մեղսակցին:

— Նա կատակո՞ւմ է, ինչ է: Հիմա ես կատակելու ժամանակ չունեմ:

— Դա միանգամայն հասկանալի է, — ասաց Հոլմսը: — Եվ, հավատացնում եմ ձեզ, որ մի երկու ժամից դուք ավելի քիչ տրամադրված կլինեք կատակելու: Ահա թե ինչ, կոմս Սիլվիոս: Ես զբաղված մարդ եմ և չեմ կարող իզուր տեղը ժամանակ վատնել: Հիմա ես կանցնեմ ննջասենյակ: Խնդրում եմ իմ բացակայության ժամանակ չկաշկանդվեք: Առանց ինձ ձեզ ավելի հեշտ կլինի բացատրել ձեր ընկերոջը, թե ինչ վիճակում է գործը: Այդ ընթացքում ես ջութակ կնվագեմ, բարկարուլա՝ «Հոֆմանի հեքիաթներից»: Հինգ ռոպեից ես կվերադառնամ վերջնական պատասխանի համար: Հուսով եմ, դուք բավականին պարզ գիտակցեցիք, որ պետք է ընտրեք երկուսից մեկը՝ կամ մենք ձեզ կծերբակալենք կամ քարը կվերցնենք:

Հոլմսը հեռացավ, իր հետ տանելով անկյունում դրված ջութակը: Մի ռոպե անց ննջասենյակի փակ դռան ետևից լսվեց հիշյալ երաժշտության գթաշարժ մեղեդին:

— Ի՞նչ է եղել, — հարցրեց Մերթոնը, երբ նրա բարեկամը շրջվեց իր կողմը: — Ի՞նչ է, նա գիտե՞ քարի մասին:

— Անիծյալ լինի նա: Բավականին շատ բան գիտե և հնարավոր է՝ ամեն ինչ:

— Սատանա: — Բռնցքամարտիկի դեղնավուն դեմքը թեթևակի գունատվեց:

— Մեզ մատնել է Այկի Սանդերսը:

— Այկի՞ն: Դե, սպասիր, ես նրա վիզը կոլորեմ, թեկուզ դրա համար ինձ կախեն:

— Դրանից ոչինչ չենք շահի: Պետք է որոշենք մեր անելիքը:

— Սպասիր, — ասաց բռնցքամարտիկը, կասկածամտորեն նայելով ննջասենյակի դռանը: — Այդ խորամանկ աղվեսի հետ պետք է չափազանց զգույշ լինել: Նա մեզ ականջ չի՞ դնում:

— Ինչպե՞ս կարող է ականջ դնել, երբ նվագում է:

— Դա ճիշտ է: Իսկ ոչ մեկը չկա՞ վարագույրի ետևում: Այստեղ մի քիչ շատ են վարագույրները:

Բռնցքամարտիկը սկսեց շուրջը նայել և հանկարծ պատուհանի մոտ նկատեց մանեկենը: Համր զարմանքով հայացքը հառեց նրան, ուժ չունենալով բառ իսկ ասելու:

— Դա մոմե տիկնիկ է, ուրիշ ոչինչ, — բացատրեց կոմսը:

— Նմանակն է, հա՞: Բայց հիանալի է, տիկին Տյուտյի մտքովն էլ չէր անցնի: Ոնց որ կենդանի լինի, և՛ խալաթն է նման, և՛ մնացած ամեն ինչը: Բայց գրողը տանի այս վարագույրները, կոմս:

— Գրողի ծոցը վարագույրները, մենք միայն զուր ժամանակ ենք կորցնում, իսկ ժամանակ քիչ ունենք: Նա կարող է մեզ ձերբակալել այդ քարի համար:

— Չէ մի:

— Բայց եթե ասենք որտեղ է քարը, նա մեզ բաց կթողնի:

— Էլ ինչ... Հրաժարվել հարյուր հազար ֆունտ արժողությամբ քարից:

— Ուրիշ ելք չկա:

Մերթոնը քորեց խուզած գլուխը:

— Լսիր, չէ որ նա այստեղ մենակ է: Թիխկացնենք նրան և վերջ: Եթե մենք նրան վերջ տանք, էլ ոչնչից չենք վախենա:

Կոմսը տարուբերեց գլուխը:

— Նա զինված է և զգաստ: Եթե խփենք նրան, մեզ դժվար թե հաջողվի այստեղից դուրս պրծնել: Բացի այդ, նա, հավանաբար, հասցրել է իր տեղեկությունները հայտնել ոստիկանությանը:

Սպասիր: Սա ի՞նչ է:

Նրանք թույլ ձայն լսեցին, որ կարծես պատուհանի կողմից էր: Երկուսով վեր թռան, բայց ամեն ինչ խաղաղ էր: Եթե չհաշվենք բազկաթռչի միջի տարօրինակ կերպարանքը, սենյակում իրենցից բացի ոչ ոք չկար:

— Փողոցից է, — ասաց Մերթոնը: — Ուրեմն լսիր շեֆ, դու ուսերիդ գլուխ ունես: Հարկավոր է մի բան մտածել: Քանի որ չի կարելի բռնուցքները գործի դնել, այդ դեպքում դու որոշիր, ինչպես վարվել:

— Սրա նմանների՞ն եմ խաբել, — պատասխանեց կոմսը: — Քարն ինձ մոտ է: Գաղտնի գրպանում: Ես ոչ մի դեպքում չեմ համաձայնի այն ուրիշ տեղ թողնել: Այս գիշեր հնարավոր կլինի ուղարկել Ամստերդամ, իսկ այնտեղ մինչև կիրակի կհասցնեն չորս մասի բաժանել: Նա ոչինչ չգիտի Վան Սեդարի մասին:

— Ես կարծում էի, որ Վան Սեդարը կմեկնի եկող շաբաթ:

— Նա պետք է հաջորդ շաբաթ մեկներ, բայց հիմա հարկ կլինի մեկնել ամառը իսկ շոգենավով: Մեզնից որևէ մեկը պետք է քարով սողոսկի Լայմ-սթրիթ և զգուշացնի նրան:

— Կրկնակի հատակը դեռ պատրաստ չէ:

— Ոչինչ չես կարող անել: Հարկ կլինի համարձակության դիմել և հենց այդպես տանել: Ոչ մի բոլոր կորցնել չի կարելի:

Եվ կրկին, ինչպես որսորդ, որ սովոր է զգուշության, նա լռեց և աչքերը հառեց պատուհանին: Այո, այդ թույլ ձայնը, անկասկած, փողոցից էր գալիս:

— Իսկ Հոլմսին հեշտ է խաբելը: Այդ հիմարը, գրողը նրան տանի, ասաց, որ ինքը մեզ ձեռք չի տա, եթե քարը ստանա: Դե, մենք էլ կխոստանանք տալ քարը: Կտանենք նրան կեղծ հետքով, իսկ մինչ կռահի ինչն ինչոց է, քարն արդեն կլինի Հոլմսի հայրը, իսկ մենք՝ արտասահմանում:

— Այ, դա հիանալի է, — բավարարված քմծիծաղեց Սեմ Մերթոնը:

— Դու կգնաս հոլանդացու մոտ և կասես, որ շտապի, իսկ ես ինձ վրա կվերցնեմ կարճամտի աչքերին թոզ փչելը: Ես նրան կասեմ, որ քարը Լիվերպոլում է: Գրողը տանի այս երաժշտությունը, ազդում է նյարդերիս վրա: Մինչև Հոլմսը պարզի, որ քարը Լիվերպոլում չէ, այն կբաժանվի չորս մասի, իսկ մենք կլինենք բաց ծովում: Մոտ եկ, թե չէ դու երևում ես բանալու անցքից: Ահա քարը:

— Դու ինչպե՞ս չես վախենում հետդ ման տալուց:

— Այսպես ավելի հուսալի է: Եթե մենք խորամանկորեն այն թռչողինք Ուայթհոլից, ապա իմ բնակարանից այն ցանկացած մարդ կթռցնի:

— Թույլ տուր նայեմ:

Կոմս Սիլվիուսը ուշադրություն չդարձնելով իրեն մեկնած կեղտոտ ձեռքին, մեղսակցի վրա ոչ այնքան խրախուսող հայացք նետեց:

— Արդյո՞ք չես կարծում, թե ես պատրաստվում եմ քեզ ֆռացնել: Դե, ուրեմն, նկատի ունեցեք, կոմս, ինձ արդեն սկսում են ձանձրացնել ձեր կատակները:

— Դե լավ, լավ, Սեմ, մի նեղանա: Պետք չէ հիմա վիճել: Եթե ցանկանում ես ինչպես հարկն է գննել այս գեղեցկությունը, եկ այստեղ՝ պատուհանի մոտ: Ահա, լույսին պահիր:

— Շնորհակալ եմ:

Մի ակնթարթում Հոլմսը թռավ բազկաթռչից, ուր քիչ ամառ դրված էր մանեկները, և հավիշտակեց ադամանդը: Նա մի ձեռքում սեղմել էր քարը, մյուսով՝ ատրճանակը և նշան էր բռնել կոմսի գլխին: Լիովին շփոթված, երկու սրիկաները ետ նահանջեցին: Մինչ նրանք կհասցնեին սթափվել, Հոլմսը սեղմեց էլեկտրական զանգի կոճակը:

— Մտքներովդ չանցնի դիմադրել: Ջենտլմեններ, աղաչում եմ ձեզ, խնայեք կահույքը: Ձեզ համար պարզ պետք է լինի, որ ձեր դրությունը անհուսալի է: Ոստիկանությունը սպասում է ներքևում:

Կոմսն այնքան շշմած էր, որ չարությունն ու վախը նահանջել էին երկրորդ պլան:

— Բայց գրողը տանի, ինչպե՞ս, — խռպոտ ձայնով հարցրեց նա:

— Ձեր գարմանքը միանգամայն բնական է: Դուք չգիտեք, որ այս վարագույրի ետևում ննջարան տանող մի դուռ էլ կա: Եթե չեմ սխալվում, դուք պետք է լսած լինեիք, թե ես ինչպես վերցրի մանեկները բազկաթռչից: Բայց իմ բախտը բերեց, և ես լսեցի ձեր սիրալի խոսակցությունը, որը, եթե իմանայիք իմ ներկայության մասին, այնքան էլ անկեղծ չէր ստացվի:

Կոմսը կանգնած էր զինաթափված մարդու տեսքով:

— Դուք հաղթեցիք, Հոլմս: Իմ կարծիքով, դուք իսկական սատանա եք:

— Շատ հնարավոր է, — քաղաքավարությամբ ժպտալով պատասխանեց Հոլմսը:

Ուշ հասկացող Սեմ Մերթոնն անմիջապես գլխի ընկավ, թե ինչ կատարվեց: Եվ միայն այն ժամանակ, երբ աստիճանների վրա լսվեցին ծանր քայլերի ձայներ, նա վերջապես վերստացավ խոսելու ունակությունն և ասաց .

— Հաստատ փարավոններն են: Բայց ես ահա թե ինչը չեմ հասկանում . չէ որ այդ անիծյալ ջութակը դեռ ճղղում է:

— Դուք միանգամայն իրավացի եք, — պատասխանեց Հոլմսը, — թող նվագի: Այս ժամանակակից գրամաֆոնները հիանալի հայտնագործություն են:

Սենյակ ներխուժեցին ոստիկանները, շրխկացրին ձեռնաշղթաները, և հանցագործներին ուղեկցեցին դեպի սպասող կառքը: Ուոտսոնը մնաց շնորհավորելու Հոլմսին՝ նրան զարդարող դափնեպսակին ավելացած նոր տերևի առթիվ: Նրանց խոսակցությունը կրկին ընդհատվեց, երբ մատուցարանը ձեռքին ներս մտավ Բիլին:

— Լորդ Քանթլմիրը, սըր:

— Ուղեկցեք նրան այստեղ, Բիլի: Նա օգոստոսափառ անձնավորության հետաքրքրությունները ներկայացնող հռչակավոր պեր է, — ասաց Հոլմսը: — Միապետին հավատարիմ և հիանալի մարդ, բայց, եթե կարելի է այսպես արտահայտվել, մի փոքր հետամնաց: Ստիպե՞նք նրան ավելի բարեհամբույր լինել: Մեզ մի փոքր ազատություն թույլ տանք, հա՞: Նա, իհարկե, դեռ ոչինչ չգիտե պատահածի մասին:

Դուռը բացվեց, և շեմին հայտնվեց նուրբ, ձգված մի կերպարանք, կուպրի նման սև, միջին վիկտորիանական ոճի այտամորուսով, որը չէր համապատասխանում թեք ընկած ուսերին և անվստահ, ծերունական քայլվածքին: Հոլմսը սիրալիոր մոտեցավ ներս մտնողին և սեղմեց նրա ծերունական ձեռքը:

— Բարի օր, լորդ Քանթլմիր: Ամառվա համար այսօր ցուրտ է: Բայց սենյակում շատ տաք է: Թույլ տվեք օգնեմ ձեզ վերարկուն հանել:

— Շնորհակալ եմ: Ես հանվելու մտադրություն չունեմ:

— Թույլ տվեք, ես կօգնեմ ձեզ, — համառորեն շարունակեց Հոլմսը՝ բռնելով լորդի թևը: — Ընկերս՝ Ուոտսոնը, կհաստատի, որ ջերմաստիճանի կտրուկ տատանումները արտակարգ վնասակար են:

Նորին պայծառափայլությունը ձեռքերը զայրացած ետ քաշեց:

— Այսպես ինձ հարմար է և չեմ էլ պատրաստվում երկար մնալ: Մտա, որ իմանամ, թե ինչպես է ընթանում կամովին ձեր հանձն առած գործը:

— Դժվար է... Շատ դժվար:

— Ես գիտեի, որ այդպես կասեք:

Ծեր լորդի խոսքում և ձայնի ելևէջներում ակնհայտորեն ծաղրանք էր զգացվում:

— Վաղ թե ուշ յուրաքանչյուր ոք գիտակցում է, որ իր հնարավորությունները սահմանափակ են, միստր Հոլմս: Բայց, ծայրահեղ դեպքում, դա մեզ բուժում է ինքնավստահությունից՝ մարդկանց այնքան հատուկ արատից:

— Խոստովանում եմ, սըր, մոլորության մեջ եմ:

— Դա միանգամայն բնական է:

— Ինձ հատկապես անհանգստացնում է մի հանգամանք: Կարո՞ղ եմ արդյոք ձեր օգնության վրա հույս դնել:

— Խորհրդի համար ուշ էք դիմում: Ինձ թվում էր, որ դուք սովոր եք կյանքի բոլոր պարագաներում հույսը դնել ձեր խելքի վրա... Այնուամենայնիվ, ես պատրաստ եմ ձեզ օգնել:

— Հասկանում եք, լորդ Քանթլմիր, մենք, իհարկե, կարող ենք մեղադրանք հարուցել քարի իսկական հափշտակիչների դեմ:

— Եթե դուք նրանց բռնեք:

- Իհարկե: Բայց ի՞նչ միջոցներ պետք է ձեռնարկենք թաքցնողի նկատմամբ:
- Վաղաժամ չէ՞, արդյոք նման հարցեր տալը:
- Այնուամենայնիվ, ամեն ինչ պետք է նախօրոք մտածել: Ձեր կարծիքով, այդպիսի հանցանշանների դեպքում ո՞ւմ կարելի է մեղավոր համարել:
- Նրան, ում մոտ կհայտնաբերվի քարը:
- Եվ դուք դա բավարար հիմք կընդունե՞ք ձերբակալելու համար:
- Անշուշտ:

Հովմսը հազվադեպ էր ծիծաղում, բայց Ուոտսոնի ասելով, նա այդ բոլորին, ավելի քան երբևէ, պատրաստ էր ծիծաղել:

— Այդ դեպքում, թանկագին սըր, որքան էլ ցավալի լինի, ես ստիպված եմ պահանջելու ձեր ձերբակալությունը:

— Դուք շատ առաջ գնացիք, միստր Հովմս, — լուրջ զայրացավ լորդ Քանթլմիրը, և նրա դեղնավուն այտերը շառագունեցին վաղուց հանգած կրակով: — Իմ հասարակական գործունեության հիսուն տարիների ընթացքում նման բան չեմ լսել: Ես լուրջ մարդ եմ, ինձ վրա դրված եմ լուրջ հանձնարարություններ և հիմար կատակներ լսելու ժամանակ չունեմ: Ձեզ անկեղծ կասեմ, սըր, ես երբեք չեմ հավատացել ձեր տաղանդին և, ըստ իս, ավելի լավ կլիներ, եթե գործը հանձնարարեին պաշտոնական ոստիկանությանը: Ձեր վարքը հաստատում է, որ ես ճիշտ եմ: Պատիվ ունեմ ձեզ բարի գիշեր մաղթելու:

Բայց Հովմսը կանգնելով լորդի և դռան արանքում, փակեց ճանապարհը:

— Սպասեք, սըր: Ոչինչ, որ դուք Մազարինիի քարի ժամանակավոր տերն եք հանդիսանում: Բայց եթե այստեղից քարով դուրս գաք, դա կարող է ավելի լուրջ հետևանքների հանգեցնել:

— Սըր, դուք անհանդուրժելի եք դառնում: Թույլ տվեք անցնել:

— Սկզբում մտցրեք ձեռքը ձեր վերարկուի աջ գրպանը:

— Դա ի՞նչ է նշանակում, սըր:

— Մի վիճեք, սըր, այլ ենթարկվեք:

Հաջորդ ակնթարթին զարմացած պերը, աչքերը թարթելով և ինչ-որ անհասկանալի բան մրթմրթալով, կանգնած էր Հովմսի առաջ՝ դողացող ձեռքում բռնած մեծ և դեղին ադամանդը:

— Բայց ինչպես թե... Ինչպես թե, միստր Հովմս:

— Սարսափելի է... Սարսափելի, լորդ Քանթլմիր, — բացականչեց Հովմսը: — Իմ վաղեմի ընկեր դոկտոր Ուոտսոնը ձեզ կասի, որ ես պաշտում եմ նման միստիֆիկացիաները: Եվ բացի այդ, ես թուլություն ունեմ դրամատիկական իրավիճակների նկատմամբ: Մեր խոսակցության սկզբում քարը ես դրեցի ձեր գրպանը, որն, իհարկե, մեծ անպարկեշտություն էր իմ կողմից:

Ծեր պերը հայացքը քարից տեղափոխեց Հովմսի ժպտացող դեմքին:

— Ես, իսկապես, շփոթահար եմ, սըր: Բայց սա... սա իսկապես Մազարինիի քարն է: Մենք անչափ պարտական ենք ձեզ, միստր Հովմս: Կարող է պատահել, ինչպես նկատեցիք, մի փոքր յուրօրինակ կատակելու սովորություն ունեք դուք և բավական անհաջող ժամանակ եք ընտրում դրա համար: Բայց ես ամբողջապես ետ եմ վերցնում նկատողությունս, որը թույլ տվեցի ձեր՝ խուզարկուի շննեցուցիչ ընդունակության նկատմամբ: Բայց ինչպե՞ս գտաք սա:

— Գործը դեռ անավարտ է: Եվ մանրամասներն էլ այնքան էական չեն: Չեմ կարծում, լորդ Քանթլմիր, թե այն հաճույքը, որը ձեզ կպարզևի գործի բարեհաջող ավարտի մասին բարձր շրջանակներում հայտնելու հնարավորությունը, իմ անհարկի կատակի որոշակի հատուցումը կլինի: Բիլի, ուղեկցեք նորին պայծառափայլությանը և ասեք միսիս Հադսոնին, որ ես ուրախ կլինեմ, եթե նա որքան հնարավոր է շուտ, երկու հոգու համար ճաշ մատուցի: